ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Նկարում մթնոլորտի ո՞ր շերտն է նշված Գ տառով.**

1) ջերմոլորտը
2) ներքնոլորտը
3) վերնոլորտը
4) արտաքին ոլորտը



2 **Ո՞րն է ամենափոքր մասշտաբը.**

1) 1 : 4 200 000
2) 1 : 4 200
3) 1 : 42 000
4) 1 : 420 000

3 **Նկարում Դ կետի ազիմուտը հավասար է.**

1) 315°
2) 225°
3) 135°
4) 45°



4 **Հարավային բևեռային շրջագծի վրա բևեռային գիշեր լինում է.**

1) դեկտեմբերի 22–ին
2) մարտի 21–ին
3) հունիսի 22–ին
4) սեպտեմբերի 23–ին

5 **Ո՞ր պնդումն է սխալ.**

1) Քամիներն առաջացնում են ցունամիներ:
2) Քամիներն առաջացնում են ավազաբլուրներ:
3) Քամու միջոցով ստացվում է էլեկտրական էներգիա:
4) Քամիներն առաջացնում են ծովային հոսանքներ:

6 **Ըստ բարձրության օդի ջերմաստիճանը նվազում է, որովհետև.**

1) մեծանում է օդի խտությունը
2) մոտենում ենք սառցադաշտերին
3) մոտենում ենք օզոնի շերտին
4) օդը տաքանում է Երկրի մակերևույթից

7 **Գիշերվա և ցերեկվա, տարվա եղանակների, մակընթացության, տեղատվության հերթափոխը, գեյզերների պարբերական ժայթքումը բնութագրում են աշխարհագրական թաղանթի.**

1) զոտիականությունը և զոնայականությունը
2) միասնականությունը
3) երևույթների ռիթմիկությունը
4) կլիմայի չոր, խիստ ցամաքայնությունը

8 **Որքա՞ն է Արեգակի ճառագայթների անկման անկյան տարբերությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային (հս.լ. 42°10′) և հարավային (հս.լ. 37°20′) ծայրակետերի միջև.**

1) 5° 40′
2) 9° 30′
3) 4° 50′
4) 15°

9 **Նկարում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:**

1) կոնային
2) հասարակածային
3) գլանային
4) ազիմուտային



10 **Ըստ նկարի՝ ի՞նչ եղանակ է հյուսիսային կիսագնդում.**

1) ձմեռ
2) գարուն
3) ամառ
4) աշուն



11 **«Լիճ - սնվող գետ» զույգերից ո՞րն է ճիշտ.**

1) Վիկտորիա — Զամբեզի
2) Նյասա — Կոնգո
3) Տանգանիկա — Սպիտակ Նեղոս
4) Թանա — Կապույտ Նեղոս

12 **Ի՞նչը բնորոշ չէ արկտիկական (անտարկտիկական) օդային զանգվածներին.**

1) բաժանվում են տաք և ցուրտ տարատեսակների
2) ձևավորվում են Արկտիկայի, Անտարկտիդայի և հարակից կղզիների վրա
3) բնորոշվում են ցածր ջերմաստիճանով
4) բնորոշվում են փոքր խոնավությամբ և մեծ թափանցիկությամբ

13 **Բնութագրումով որոշել թերակղզին.**

Այս թերակղզին Եվրասիայի հարավային մասում է: Աչքի է ընկնում սավաննային հարուստ բուսականությամբ ու կենդանական աշխարհով: Արևմուտքից ափերը ողողում է Անդամանյան ծովը, իսկ արևելքից՝ Հարավչինական ծովը: Ո՞ր թերակղզին է.

1) Կորեական
2) Արաբական
3) Հինդուստան
4) Հնդկաչին

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Պասսատները հասարակածից դեպի արևադարձեր փչող քամիներն են:
2) Գիշերային բրիզը փչում է ջրից դեպի ցամաք և առաջացնում է զովություն:
3) Պասսատները մշտապես փչում են նույն ուղղությամբ:
4) Լեռնահովտային քամիներն առաջանում են մայրցամաքների և օվկիանոս-ների միջև:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արեգակից ստացվող ջերմությունը Երկրի վրա բաշխված է հավասարաչափ:
2) Արևադարձային լայնություններում հաստատվում է ցածր ճնշում:
3) Որքան փոքր է Արեգակի ճառագայթների անկման անկյունը, այնքան Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:
4) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում առատ տեղումներ են թափվում:

16 **Ո՞ր ծովերն են միմյանց միացած նեղուցով.**

1) Կարիբյան և Բաֆինի
2) Ճապոնական և Արևելաչինական
3) Հյուսիսային և Նորվեգական
4) Ադրիատիկ և Եգեյան

17 **Գործող հրաբուխներ են.**

1) Կամերունը և Էտնան
2) Էլբրուսը և Կազբեկը
3) Կիլիմանջարոն և Վինսոնը
4) Ջոմոլունգման և Մոնբլանը

18 **Ի՞նչն է պատճառը, որ Յանցզի գետը ձմռանը խիստ ծանծաղում է.**

1) Ձմռանը ուժեղ քամիների հետևանքով մեծանում է գոլորշացումը:
2) Այն սնող ստորերկրյա աղբյուրները սառչում են:
3) Բնակչությունը ոռոգման համար շատ ջուր է օգտագործում:
4) Ձմռանը գետի ավազանում շատ քիչ տեղումներ են թափվում:

19 **Քարտեզում Դ տառով ո՞ր օվկիանոսային հոսանքն է նշված.**

1) Հյուսիսատլանտյան
2) Կուրոսիո
3) Օյասիո
4) Մուսսոնային



20 **Քարտեզում Զ տառով ո՞ր գետն է նշված.**

1) Անգարա
2) Կոլիմա
3) Օբ
4) Լենա

21 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հունիսի 22–ին Արեգակի դիրքը հորիզոնի նկատմամբ ամենաբարձրն է հյուսիսային բևեռային շրջագծի վրա:
2) Հս. լ. 25° 30′–ի վրա տարվա ընթացքում կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ ցածր է 90°–ից:
3) Գիշերահավասարի ժամանակ՝ կեսօրին, Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ հարավային արևադարձի վրա 90° է:
4) Տարվա ընթացքում հասարակածի վրա կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ 90° է:

22 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Մայրցամաքում ամենաշատ տեղումները դիտվում են Մեծ ավազան սարահարթի գոգավորություններում:
2) Արևմտյան քամիները մայրցամաք են ներթափանցում Խաղաղ օվկիանոսից, սակայն հանդիպելով Կորդիլիերների արևմտյան լանջերին՝ իրենց խոնավության մեծ մասը թափում են այնտեղ:
3) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքները առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի անկում:
4) Տաք և սառը օդային զանգվածների հանդիպման շրջաններում հաճախակի առաջանում են հզոր պտտահողմեր, որոնց այստեղ կոչում են տոռնադո:

23 **Երևանի հեռավորությունը հյուսիսային բևեռային շրջագծից կլինի.**

1) 3163,5 կմ
2) 2830,5 կմ
3) 2941,5 կմ
4) 3052,5 կմ

24 **Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Կլիման մերձարևադարձային միջերկրածովային է:
2) Հարուստ է նավթի և բնական գազի պաշարներով:
3) Արևմտյան ափերը ողողում են Տիրենյան ծովի ջրերը:
4) Հյուսիսում տարածվում է Պադանի դաշտավայրը:

25 **Դիագրամում տրված է բնակչության սեռային կազմը (մլն մարդ): Ո՞ր տարածաշրջանին է համապատասխանում 2 թիվը.**



1) Հյուսիսային Ամերիկային
2) Ասիային
3) Օվկիանիային
4) Եվրոպային

26 **Ժողովրդագրական անցման չորրորդ փուլին բնորոշ է բնական աճի կայունացումը: Այս փուլը համընկնում է.**

1) երկրների զարգացման հետարդյունաբերական փուլին
2) մինչկապիտալիստական ժամանակաշրջանին
3) «ժողովրդագրական պայթյունին»
4) երկրների զարգացման արդյունաբերական փուլին

27 **Այս կամ այն տարածքում բնակավայրերի տեղաբաշխումը չի լինում.**

1) շրջանաձև
2) համաչափ
3) գծային
4) համակենտրոնացված

28 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Կղզեխմբային պետություն է: Աշխարհում ամենամեծն է մահմեդականություն դավանողների թվով: Ո՞ր պետությունն է.

1) Ֆիլիպինները
2) Ճապոնիան
3) Ինդոնեզիան
4) Սաուդյան Արաբիան

29 **2010 թ. ՀՀ բնակչության թիվը կազմել է 3,263 մլն մարդ: Ժամանել է 900 մարդ, մեկնել՝ 3300 մարդ: Միգրացիայի ինտենսիվությունը հավասար կլինի մոտ.**

1) 0,63 %
2) 0,13 %
3) 0,1 %
4) 0,07 %

30 **Զարգացած երկրների մեջ առանձին ենթախումբ են կազմում արևմտաեվրոպական հին արդյունաբերական երկրները: Դրանցից չեն.**

1) Շվեյցարիան և Նորվեգիան
2) Ավստրիան և Բելգիան
3) Դանիան և Նիդերլանդները
4) Իսպանիան և Պորտուգալիան

31 **Դեպի Սև ծով ելք չունի.**

1) Հունգարիան
2) Վրաստանը
3) Ռումինիան
4) Բուլղարիան

32 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Համաշխարհային բեռնափոխադրումներում ամենամեծ բաժինն ունի երկաթուղային տրանսպորտը:
2) Քիմիական արդյունաբերությունն ունի անսպառ հումքային բազա:
3) Գերմանիայում մեքենաշինությունը տնտեսության մասնագիտացման ճյուղ է:
4) Հրաբխային շրջաններում կառուցվում են երկրաջերմային էլեկտրակայաններ:

33 **«Պետություն — բնական ռեսուրսի հարուստ պաշար» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Շվեդիա — երկրաջերմային էներգիա
2) Իսլանդիա — քարածուխ
3) Ֆինլանդիա — բնական գազ
4) Նորվեգիա — նավթ

34 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Սև մետաղաձուլական ձեռնարկությունները տեղաբաշխվում են սպառման շրջանների մոտ:
2) Մետաղաձուլական ձեռնարկությունները բնապահպանական տեսակետից անվտանգ են:
3) Թեթև գունավոր մետաղների ձուլումն էներգատար արտադրություն է:
4) Ծանր գունավոր մետաղների ձուլման ձեռնարկությունները հիմնականում տեղաբաշխված են գիտական կենտրոնների մոտ:

35 **Ձիթատու տեխնիկական մշակաբույսեր են.**

1) եգիպտացորենը և բրինձը
2) բամբակենին և ցորենը
3) կարտոֆիլը և ձիթապտուղը
4) սոյան և արևածաղիկը

36 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Ցամաքային տրանսպորտը ներառում է երկաթուղային, ավտոմոբիլային, խողովակաշարային տեսակները:
2) Աշխարհի առևտրային նավատորմի առաջատարներ են Լիբերիան, Պանաման, Ճապոնիան և Հունաստանը:
3) Բեռնատար տրանսպորտի աշխատանքը բնութագրող ցուցանիշ է բեռնաշրջանառությունը:
4) Օդային տրանսպորտը հիմնականում իրականացնում է բեռնափոխադրումներ:

37 **Արդյունաբերության ճյուղերից որի՞ տեղաբաշխման գործում է մեծ կոոպերացման դերը.**

1) սննդի արդյունաբերության
2) մետաղաձուլության
3) մեքենաշինության
4) քիմիական արդյունաբերության

38 **Ո՞ր երկու պետությունները չեն սահմանակցում Գերմանիային.**

1) Շվեյցարիան և Չեխիան
2) Բելգիան և Դանիան
3) Լեհաստանը և Ավստրիան
4) Իտալիան և Հունգարիան

39 **«Նավահանգիստ — ծով» զույգերից ընտրել *սխալը.***

1) Վլադիվոստոկ — Օխոտի
2) Մարսել — Միջերկրական
3) Սանկտ Պետերբուրգ — Բալթիկ
4) Ստամբուլ — Մարմարա

40 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Աշխարհի հնագույն պետություններից է, արևելյան քաղաքակրթության օրրանը: Երկրի ազգային փոքրամասնություններից են մոնղոլները, ույղուրները, մանջուրները, տիբեթցիները: Քաղաքային բնակիչների բացարձակ թվով այս պետությունն աշխարհում գրավում է առաջին տեղը: Երկրի ներկայիս զարգացման գործում մեծ դեր է խաղացել ազատ տնտեսական գոտիների ստեղծումը: Ո՞րն է այդ պետությունը.

1) Հնդկաստանը
2) Ճապոնիան
3) Ինդոնեզիան
4) Չինաստանը

41 **Արևելյան Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

1) Անասնապահության առաջատար ճյուղը ոչխարաբուծությունն է:
2) Էլեկտրաէներգետիկայի գերակշիռ մասն արտադրվում է ջերմաէլեկտրակա-յաններում:
3) Ռուսաստանում և Ուկրաինայում զարգացած է սև մետաղաձուլությունը:
4) Տարածաշրջանի բերրի հողերը և ագրոկլիմայական պայմանները նպաստավոր են գյուղատնտեսության զարգացման համար:

42 **Պարսիկներից հետո Իրանի խոշոր ազգություններն են.**

1) աջարները և արաբները
2) թուրքերը և հայերը
3) աֆղանները և վրացիները
4) ադրբեջանցիները և քրդերը

43 **Ո՞ր շարքի լեռնագագաթներն ունեն 3500–4000 մ բարձրություն.**

1) Սիփան, Սրմանց, Նեմրութ
2) Արսիան, Սուկավետ, Նեմրութ
3) Ջիլո, Սավալան, Սիփան
4) Քաջքար, Փոքր Մասիս, Աժդահակ

44 **«Գետ — հոսքի ավազան» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Արաքս — Սև ծով
2) Ճորոխ — Կասպից ծով
3) Եփրատ — Պարսից ծոց
4) Տիգրիս — Կարմիր ծով

45 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հայկական լեռնաշխարհում արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ տեղումների քանակն ավելանում է:
2) Հայկական լեռնաշխարհում կլիմայական տարբերություններ առաջացնող ամենակարևոր գործոնը լեռնային բարդ ռելիեֆն է:
3) Միջնաշխարհում ձմեռը կարճատև է և սակավաձյուն:
4) Կարսի և Աշոցքի սարահարթերում օդի ջերմաստիճանը – 30°C–ից ցածր չի իջնում:

46 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) ՀՀ անտառային գոտու ցածրադիր տեղամասերում տիրապետում են լեռնային սևահողերը:
2) Շիրակի և Լոռվա դաշտերում տարածվում են լեռնային սևահողերը:
3) Արարատյան դաշտում առավելապես տարածված են լեռնաշագանակագույն հողերը:
4) Կոտայքի և Ապարանի սարահարթերում տարածվում են աղուտ–ալկալի հողերը:

47 **Ընտրել «մարզ – էլեկտրակայան» համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. Կոտայք	ա. Հայկական ատոմակայան
2. Արմավիր	բ. Շամբի
3. Լոռի	գ. Գյումուշի դ.
4. Սյունիք	դ. Զորագետի

1) 1–գ, 2–ա, 3–դ, 4–բ
2) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ
3) 1–դ, 2–ա, 3–բ, 4–գ
4) 1–ա, 2–բ, 3–գ, 4–դ

48 **Ո՞ր շարքում տրված արդյունաբերության բոլոր ճյուղերն են Սյունիքի մարզի համար առաջատար.**

1) քիմիական արդյունաբերությունը, շինանյութերի արդյունաբերությունը
2) գունավոր մետաղաձուլությունը, էլեկտրաէներգետիկան
3) հանքային ջրերի արտադրությունը, քիմիական արդյունաբերությունը
4) սև մետաղաձուլությունը, անտառային արդյունաբերությունը

49 **Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արևելքից սահմանակից է Արարատի մարզին:
2) Սյունիքի մարզի հետ կապված է Որոտանի լեռնանցքով:
3) Մարզի տարածքում հայտնաբերվել են երկաթաքարի հարուստ հանքավայրեր:
4) Տարածքի բացարձակ բարձրությունների տարբերությունը փոքր է:

50 **Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված Գ տառով.**

1) Մուրղուզ
2) Չաթինլեռ
3) Քաշաթաղ
4) Կարկտասար

51 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Է տառով.**

1) Գավառ
2) Ճամբարակ
3) Մարտունի
4) Սևան

52 **Երևանի օդային ավազանը գերազանցապես աղտոտում է (են).**

1) ջերմաէլեկտրակայանները
2) քիմիական արդյունաբերությունը
3) գունավոր մետաղաձուլությունը
4) ավտոմոբիլային տրանսպորտը

53 **Տրված զույգերից որի՞ երկրներն են առավել հարուստ ջրաէներգետիկ ռեսուրսներով.**

1) Նորվեգիա և Շվեդիա
2) Չեխիա և Լեհաստան
3) Իսպանիա և Իտալիա
4) Գերմանիա և Ֆրանսիա

54 **Բնական ռեսուրս — վերականգնման հնարավորություն» զույգերից ընտրել ճիշտը.**

1) հանքային ռեսուրս — սպառվող–վերականգնվող
2) կենսաբանական ռեսուրս — անսպառ
3) կլիմայական ռեսուրս — սպառվող–վերականգնվող
4) երկրաջերմային ռեսուրս — անսպառ

55 **Բնական և մարդածին այն օբյեկտները, որոնք ունեն եզակիություն, պատմական կամ գեղարվեստական արժեք, գեղագիտական գրավչություն, առողջարարական-կազդուրիչ նշանակություն և կարող են օգտագործվել հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար, կոչվում են.**

1) սպառվող–վերականգնվող ռեսուրսներ
2) գյուղատնտեսական հողահանդակներ
3) ագրոարդյունաբերական համալիրներ
4) ռեկրեացիոն ռեսուրսներ

56 **Գրել այն հրաբուխների համարները, որոնք խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալի սահմաններում են.**

1) Վեզուվ
2) Հեկլա
3) Կամերուն
4) Կլյուչևսկայա սոպկա
5) Օրիսաբա
6) Դեմավենդ
7) Էտնա
8) Կոտոպախի

57 **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.**

1) Սիրդարյա
2) Մուրեյ
3) Ինդոս
4) Մեկոնգ
5) Զամբեզի
6) Տիգրիս
7) Օրանժ
8) Նիգեր

58 **Գրել այն ապարների համարները, որոնք ունեն փոխակերպային ծագում.**

1) խճաքար
2) կերակրի աղ
3) կվարց
4) մարմար
5) կավիճ
6) տուֆ
7) գնեյս
8) գրանիտ

59 **Գրել այն երկրների համարները, որոնք թերակղզային են.**

1) Սաուդյան Արաբիա
2) Արգենտինա
3) Ճապոնիա
4) Նիգերիա
5) Բելգիա
6) Կոլումբիա
7) Ֆրանսիա
8) Իտալիա

60 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բամբակի արտադրությամբ.**

1) Գերմանիա
2) Կանադա
3) Ռուսաստան
4) Իրան
5) Վրաստան
6) Չինաստան
7) Պակիստան
8) Ֆրանսիա

61 **Գրել այն բնակավայրերի համարները, որոնք Գեղարքունիքի մարզում չեն.**

1) Բյուրեղավան
2) Ճամբարակ
3) Սևան
4) Հրազդան
5) Մարտունի
6) Դիլիջան
7) Վարդենիս
8) Սոթք

62 **Տրված պետությունները դասավորել բրնձի համախառն բերքի աճման կարգով.**

1) Չինաստան
2) Ինդոնեզիա
3) Հնդկաստան
4) Բանգլադեշ

63 **Հայկական լեռնաշխարհի տրված լեռնաշղթաների համարները դասավորել ըստ դրանցից սկիզբ առնող գետերի ակունքների՝ Արածանի, Արևմտյան Եփրատ, Արաքս.**

1) Բյուրակն 2) Ծաղկավետ 3) Ծաղկանց

(64-65). Քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են –1˚, –4 ˚, –6 ˚, –2 ˚, +7 ˚, +16˚, +10˚, +4˚ ցուցանիշները.

64	Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

65	Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

66	Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 840 000 ց, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 24000 հա: Որքա՞ն է բրնձի միջին բերքատվությունը:

(67-68). Երկրի բնակչության թիվը 18 մլն է, քաղաքային բնակչության թիվը՝ 13,5 մլն, մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը՝ 450 000.

67	Որոշել ուրբանիզացման մակարդակը:

68	Որոշել ծնելիության գործակիցը (‰):

69 **Բնական զոնաների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Սևահողերը մեծ տարածում ունեն Ավստրալիայում:
2) Աշխարհագրական գոտին բնական զոնայի մի մասն է:
3) Բնական զոնաների հերթափոխը լեռներում կոչվում է վերընթաց գոտիականություն:
4) Բառբաբը և շշաձառը տարածված են հասարակածային մշտադալար, խոնավ անտառների բնական զոնայում:
5) Շյուղախոտը, փետրախոտը և երեքնուկը բնորոշ են տափաստանների բնական զոնային:
6) Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:

70 **Աշխարհի բնակչության ազգային կազմի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Աշխարհում խոշորագույն լեզվաընտանիքը հնդեվրոպականն է:
2) Բնակչության ազգային և կրոնական կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
3) Բնակչության ազգային և լեզվական կազմերը աշխարհի առանձին տարածաշրջաններում չեն համընկնում:
4) Ազգի հատկանիշներից են լեզվի, հոգևոր մշակույթի և հոգեբանական խառնվածքի ընդհանրությունը:
5) Ազգն ունի ազգությանը բնորոշ հատկանիշներ, սակայն սոցիալ-տնտեսական զարգացման ավելի ցածր աստիճանի վրա է, քան ազգությունը:
6) Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է ազգերի միաձուլում: